

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան

N 1479 - Ա

«03» օգոստոս

2011 թ.

ԴԵՂԵՐԻ, ԲՈՒԺՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԳՈՎԱԶԴԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՁԵՎԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդի թույլտվության գործընթացի վերաբերյալ տեղեկատվական թերթիկի ձևը՝ համաձայն հավելվածի:
2. Տեղադրել դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդի թույլտվության գործընթացի վերաբերյալ տեղեկատվական թերթիկի ձևը Հայաստանի Հանրապետության կառավարության 3-րդ մասնաշենքի առաջին հարկում տեղակայված տեղեկատվական կենտրոնում:

Հ.ՔՈՒՇԿՅԱՆ

Հավելված
ՀՀ առողջապահության
նախարարի 2011 թվականի
օգոստոսի 03 N 1479 - Ա հրամանի

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

ԴԵՂԵՐԻ, ԲՈՒԺՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԳՈՎԱԶԴԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդի թույլտվություն ստանալու համար ՀՀ առողջապահության նախարարություն անհրաժեշտ է ներկայացնել՝

1. **գովազդի թույլտվություն ստանալու մասին ձևի հայտ՝** համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N1608-Ն որոշմամբ հաստատված ձևի՝ կցվում է
2. դեղերի կամ բուժական մեթոդների գովազդման դեպքում՝ համապատասխանաբար դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, բժշկական օգնության և սպասարկման լիցենզիաների պատճենները,
3. դեղի գովազդի դեպքում՝ տվյալ դեղի՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցման հավաստագրի պատճենը,
4. լիազոր ներկայացուցչի կողմից գովազդի թույլտվության հայտ ներկայացվելու դեպքում՝ վերջինիս տրամադրված լիազորագիրը:

Գովազդի թույլտվություն ստանալու մասին հայտի ձևը կարող եք ներբեռնել ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական moh.am կայք էջից:

Կայք էջում տեղադրված է նաև դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդի թույլտվության տրամադրման համար փաստաթղթերի ներկայացման և լրացման ուղեցույցները:

(անունը,
ազգանունը)

Հ Ա Յ Տ

ԳՈՎԱԶԴԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի (կազմակերպության) անվանումը և կազմակերպական-իրավական ձևը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը _____

2. Կազմակերպության գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը _____

3. Գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, կապի այլ միջոցներ _____

4. Գովազդի տեսակը, որի թույլտվության հայտ է ներկայացվում _____

(դեղի, բուժտեխնիկայի, բուժական մեթոդի՝ նշելով կոնկրետ անվանումները)

5. Զանգվածային տեղեկատվության միջոցի տեսակն ու անվանումը _____

(հեռուստատեսություն, ռադիո, ինտերնետ, արտաքին գովազդ, զանգվածային տեղեկատվության տպագիր միջոց՝ նշելով անվանումը)

6. Գովազդի տարածման ժամկետը _____

Կից ներկայացվող փաստաթղթերը՝

1.

2.

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ և երաշխավորում, որ գովազդի բովանդակությունը համապատասխանում է ՀՀ օրենսդրության պահանջներին:

(կազմակերպության տնօրենի ստորագրությունը, անունը, հայրանունը, ազգանունը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)